Հավելված N 10

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՓՄՁ պետական աջակցության 2020 թվականի ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ

ՓՄՁ Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման, ներառականության և կայուն զարգացման ապահովման կարևորագույն գործոններից է:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» ծրագրի համար տարեսկզբին նախատեսվել էր 183,120.0 հազար դրամ, ճշտված պլանը կազմել է 233,120.0 հազար դրամ, դրամարկղային ծախսերը՝ 160,092.5 հազար դրամ: Դրամարկղային ծախսի շեղումը կազմել է 73,027.5 հազար դրամ: Շեղումը պայմանավորված է համավարակի և ռազմական դրության հետևանքով ծախսերի մասնակի կատարմամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերության՝ «1104 Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» 2020 թվականի ծրագիրը հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի մարտի 6-ին հաստատված N 347-Ա հրամանով:

ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1443-Լ որոշմամբ հաստատվել է Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը, որով սահմանվել են 2020-2024 թվականների համար ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականության շրջանակը, նպատակները, ակնկալվող արդյունքները և նախատեսվող միջոցառումները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից միջև 30.06.2020թ. կնքվել է թիվ 148-20 պայմանագրիրը և նրան կից 25.12.2020թ. թիվ 422-20 համաձայնագիրը, համաձայն որոնց՝ նշված ծրագրով նախատեսված միջոցառումները իրականացվել են Հիմնադրամի միջոցով: Նշված ծառայությունների տրամադրումը առանց մրցույթ հայտարարելու Հիմնադրամի միջոցով իրականացնելու հիմնական պատճառներն են.

- Սկսած 2003 թվականից ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի շրջանակներում Հիմնադրամի կողմից իրականացվում են ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական և ֆինանսական աջակցության ծրագրեր, իսկ Կորոնավիրուսի բռնկումը հատուկ ընդգծեց ներկայումս ՓՄՁ ոլորտի սուբյեկտների գիտելիքների պակասը՝ մատնանշելով ՓՄՁ-ների համար կարողությունների զարգացման ծրագրերի կենսական անհրաժեշտությունը:
- ՀՀ կառավարության 2020 թվականի մայրտի 26-ի 357-Լ որոշմամբ սահմանված Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 3-րդ միջոցառումը իրականացնում է Հիմնադրամը:
- ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի 854-Լ որոշմամբ սահմանված Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումը իրականացնում է Հիմնադրամը:
- Արտակարգ իրավիճակին հնարավորինս արագ արձագանքելու նպատակով Հիմնադրամը, հիմք ընդունելով տարիների փորձը և նշված ՀՀ կառավարության որոշման պահանջները, վերակազմակերպելով դասընթացի իրականացման մեթոդները (առկա տարբերակից անցում կատարելով հեռավարին) և թեմաները (համապատասխանեցնելով ստեղծված իրավիճակին) կարճ ժամանակում իրականացրեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից առաջադրված խնդիրները:

Այսպիսով, 2020 թվականի ընթացքում Հիմնադրամի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցությունը տրամադրվել է հետևյալ ուղղություններով՝

Աջակցության ուղղություն	Կատարված աշխատանքների նկարագրությունը	2020թ. աջակցություն ստացած ՓՄՁ-ների քանակը
Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն	2020 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան, Շիրակի մարզի Գյումրի, Արագածոտնի մարզի Աշտարակ և Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքներում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» 5 ծրագիր, որին մասնակցել են 95 սկսնակ գործարարներ: Արդյունքում մշակվել է 77 գործարար ծրագիր, որոնք ներկայացվել են ֆինանսավորման: Ծրագրի շրջանակներում պետական գրանցում է ստացել և սեփական գործ սկսել 40 սկսնակ գործարար, որոնցից 11-ը՝ 2019 թվականի իրականացված ծրագրի մասնակից է, իսկ 29-ը՝ 2020 թվականի: Գրանցված 40 բիզնեսներից 34-ը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր, իսկ 6-ը՝ որպես առևտրային իրավաբանական անձ: Պետական գրանցում ստացած և գործունեություն ծավալած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 52%, ծառայությունների ոլորտում՝ 48%, առևտրի ոլորտում՝ 0%: «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 18 դասընթաց, որոնց մասնակցել են ՀՀ մարզերի 190 սկսնակ գործարարներ: Արդյունքում մշակվել է 123 բիզնես մոդել, որոնք գտնվում են գնահատման փուլում:	285
Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին անհատական և խմբային հանդիպումների միջոցով տրամադրվել շուրջ 1800 բանավոր խորհրդատվություն: Արտակարգ և ռազմական դրությունների պատճառով տնտեսավարողների թվի	1800 բանավոր խորհրդատվություն:

	նվազեցումը հանգեցրել է նշված աջակցության տրամադրման անհրաժեշտության կրճատման:	
Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն	30 ՓՄՁ սուբյեկտներ ֆինանսական աջակցություն են ստացել «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» Ծրագրի շրջանակներում, որոնց տրամադրված վարկի ընդհանուր գումարը կազմում է 128,1 մլն ՀՀ դրամ, ՆԱԿ-ի երաշխավորությունը կազմում է 136,9 մլն ՀՀ դրամ:	30
Գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում (COSME շրջանակներում ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր)	**<u>Ձեռնարկությունների եվրոպական ցանցի</u>** (ՁԵՑ-ի) շրջանակներում աջակցություն է տրամադրվել 425 ՓՄՁ սուբյեկտների, որոնց համար կատարվել են հարցումներ մատակարարաների, արատադրողների, շուկայի պահանջների վերաբերյալ, տրամադրվել է բիզնեսի միջազգայնացման խորհրդատվություն, այդ թվում՝ 9 ՓՄՁ սուբյեկտներ կնքել են համագործակցության համաձայնագրեր, 95-ը՝ մասնակցել են իրազեկման միջոցառումների, 25-ը՝ մասնակցել են գործարար համագործակցության հաստատման միջոցառումների, Տեղադրվել են 32 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր, ուղարկվել են 86 հետաքրքրության առաջարկներ, Ստացվել են 141 հետաքրքրության առաջարկներ, 1 ՓՄՁ սուբյեկտ ստացել է Horizon 2020 ծրագրին մասնակցելու խորհրդատվություն, 1 ՓՄՁ սուբյեկտ ստացել է նորարարության կառավարման գնահատման ծառայություն, 35-ը՝ ստացել են միջազգայնացման խորհրդատվություն: **<u>Էրասմուս երիտասարդ ձեռնարկատերերի համար</u>** ձեռնարկատիրական փորձի փոխանակման շրջանակներում 2020 թվականի ընթացքում իրականացվել է հայաստանյան 2 գործարարի փորձի փոխանակում ուկրաինացի և իտալացի գործարարների հետ: Հաստավել է ևս 10 համագործակցություն, որոնք տեղի չեն ունեցել ԿՈՎԻԴ-19-ի հետ պայմանավորված ԵՄ երկրներ մուտք գործելու արգելքների պատճառով: Հաստատված համագործակցությունները գտնվում են սպասման փուլում:	425

ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 357-Լ որոշմամբ հաստատվել է **Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երրորդ միջոցառման ծրագիրը**, որի ճշտված պլանը և դրամարկղային ծախսերը կազմել են՝ 12,000.0 հազար դրամ: Միջոցառումը կատարվել է 100%-ով: Միջոցներն ուղղվել են միջոցառման շրջանակներում ֆինանսական կառույցների սպասարկման վճարների ապահովմանը: Միջոցառման նպատակն է օժանդակել ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող տնտեսավարողներին՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով վերջիններիս մոտ կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու նպատակով: Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջոցով: Միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Թեժ գծի միջոցով 6300 քաղաքացիների և գործարարների տրամադրվել է տեղեկատվություն և խորհրդատվություն,
- Ուսումնասիրվել և ընթացակարգային մշակում են անցել 1700 հայտ,
- Շահառուների հետ կնքվել է 580 երաշխավորության պայմանագրեր:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 27-ի N 854-Լ որոշմամբ հաստատվել է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումը, որն ուղղված է սկսնակ կամ նորարար գործարարության զարգացմանը: Միջոցառման նպատակն է ձեռնարկատիրական գիտելիքների ընդլայնման և ֆինանսների հասանելիության բարձրացման միջոցով նպաստել՝

1) «Զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող շահառուների ձեռնարկատիրական գաղափարների իրագործմանը.

2) շահառուների գործարար ծրագրերի նորարարական զարգացմանը:

Միջոցառումն իրականացվում է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջոցով՝ արտոնյալ վարկավորման նպատակով երաշխիքների տրամադրման եղանակով: Միջոցառման

իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների 75%-ը հատկացվում է որպես 8 տարվա մարման ժամկետով անտոկոս փոխառություն, իսկ 25%-ը՝ որպես դրամաշնորհ:

Միջոցառման համար ճշտված պլանը, դրամարկղային ծախսերը կազմել են՝ 187,500.0 հազար դրամ: Ռազմական դրության հետևանքով ծրագրի շահառու հանդիսացող մասնակիցների դասընթացները հետաձգվել են, ինչով էլ պայմանավորված միջոցառման շրջանակներում վարկային երաշխավորություններ տրամադրելու նպատակով նախատեսված գումարը դեկտեմբերի վերջին հատկացվել է ՆԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման պայմանագրով: Դասընթացները նախատեսվում են իրականացնել 2021 թվականին: